Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
ապրիլի 3-ի նիստի N 13
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N N ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսա-կան ապա-հովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1.	Կանանց և տղամարդ-կանց իրավահավասա-ության մշտադիտարկ-ման և գնահատման, գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում	1.1. Կմշակվի և ՀՀ կառավարություն կներկայացվի «Կանանց և տղամարդ-կանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	ՀՀ կառավա-ության 2011թ մայիսի 20-ի նիստի N 19 արձանա գրային որոշման 3-րդ և 4-րդ կետեր

		1.2. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ համաձայնեցված՝ գործընկերային հարաբերությունների ստեղծմանն նպատակով կիրականացվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների քարտեզագրում և կմշակվեն համագործակցության մեխանիզմներ:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		1.3. Մարզում կիրականցվեն քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ ուսումնասիրություններ և համապատասխան շտեմարանի թարմացման աշխատանքներ:	ՀՀ Արարատի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		1.4. Մարզում կիրականացվեն ծրագրեր ուղղված կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, մայրերի սոցիալական վիճակի բարելավմանը ուղղությամբ:	ՀՀ Արարատի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		1.5. Մարզի համայնքներում /ընտրությամբ/ կիրականացվի ընտանեկան խնդիրների ուսումնասիրություն և կմշակվեն ընտանիքում կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրների բացահայտմանը, դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան		Առաջին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	

		1.6. Կուսումնասիրվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, կմշակվեն Լոռու մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա իրավիճակի պարբերական գնահատման, մշտադիտարկման ցուցանիշեր և դրա ներդրման վերաբերյալ առաջարկություններ:	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցասիա /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		1.7. Կհավաքագրվեն պետական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության մասին վիճակագրական տվյալներ, կստեղծվի տվյալների ամբողջական բազա:	Երևանի քաղաքա-պետարան /համաձայնու-թյամբ/		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
2.	Կանանց և տղամարդկանց առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում	2.1. Բնակչության ռիսկային խմբերում կիրականացվեն ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) վաղ հայտնաբերման և կանխարգելման սկրինինգային ծրագրեր:	ՀՀ առողջապա-հության նախարարություն	Միջազգային կազմակերպություն-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
		2.2. Գյուղական շրջաններում տղամարդկանց և կանանց որակյալ բուժօգնության տրամադրման նպատկով հանրապետության 4 մարզերում (Արարատ, Արմավիր, Տավուշ, Լոռի) կվերանորոգվի 1 և կկառուցվի առողջության առաջնային պահպանման 5 կենտրոն, ինչպես նաև կկառուցվի Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոնը, կվերանորոգվեն	ՀՀ առողջապա-հության նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	

		Ալավերդու, Կապանի, Բերդի բժշկական կենտրոնները, կկրճատվեն Երևան ուղեգրումները:					
		2.3. Կվերանայվեն կանանց արգանդի վզիկի վաղ ախտորոշման և վարման ուղեցույցները, պարզեցնելով սկրինինգային համակարգը և բարձրացնելով թիրախային խմբի կանանց ընդգրկվածությունը:	ՀՀ առողջապահության նախարարություն	Միջազգային կազմակերպություններ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
		2.4. Կիրականացվեն ՄԻԱՎ /ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական-իրազեկման միջոցառումներ՝ ներգրավելով հասարակական կազմակերպությունները և ՁԼՄ-երը:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՁԻԱՀ-ի կանխարգելման Հանրապետական կենտրոն /համաձայնությամբ/ ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
		2.5. Կմշակվեն և կիրականացվեն առողջ ապրելակերպի, ծխելու դեմ պայքարի և անվտանգ սեռական կյանքի վերաբերյալ քարոզչության ծրագրեր:	ՀՀ առողջապահության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
		2.6. Համապատասխան մասնագետները կայցելեն համայնքների բուժամբուլատորիաները, կհետազոտեն գործազուրկ անձանց /անհրաժեշտության դեպքում կիրականացվի բուժում/:	ՀՀ Արարատի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		2.7. Կկազմակերպվի «Առողջապահության ոլորտի կանանց և տղամարդկանց իրավահավասարության հինմախնդիրները» թեմայով մարզային խորհրդաժողով, մարզում առողջապահության ոլորտի կանանց և տղամարդկանց	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	

		իրավահավասարության առկա հինմախնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման նպատակով:					
3.	Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունները ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում	3.1. Գյուղատնտեսությունում կանանց մասնակցությամբ գործող կոոպերատիվների կարողությունների հզորացման, ինչպես նաև կոոպերացիայի գործընթացում կանանց մասնակցության ընդլայնման ուղղված միջոցառումներ կիրականացվեն «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում, որի արդյունքում կանխատեսվույմ է ձևավորված կոոպերատիվի անդամ կանանց աշխատանքի պայմանների բարելավում (ձեռքի աշխատանքի հնարավորինս մեքենայացում), անասնապահությամբ զբաղվող կին ֆերմերների գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում, կանանց արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների ավելացում 15-20%-ով:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
		3.2. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում կիրականցվեն իրականացվող մրցակցային դրամաշնորհային ծրագրեր, որի շրջանակներում կանանց համար կստեղծվեն աշխատատեղեր, կավելանան եկամուտները, կկրճատվի աղքատությունը:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	

		3.3. Կիրականացվի գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում: Վարկեր կտրամադրվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (սերմարտադրություն, հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսերի, կարտոֆիլի արտադրություն, այգեգործություն, անասնագլխաքանակի մայրական կազմի ձեռքբերում, բուծում, նոր գյուղ.տեխնիկայի ձեռքբերում և այլն) ֆերմերներին՝ ակնկալվում է կին գործարարներին տրամադրել շուրջ 1100 միավոր վարկ: Գյուղական բնակավայրերում կանանց զբաղվածության մակարդակը կբարձրանա, եկամուտները կավելանան 8-12%-ով:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
4.	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը, աղքատության հաղթահարմանը և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացում	4.1. Կիրականացվի «Կանանց ձեռներեցության զարգացման ծրագիր», որի շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում կազմակերպվող դասընթացներին (սեմինարներին) կմասնակցեն 200-250 կին գործարարներ:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
.		4.2. Կիրականացվի «Աջակցություն սկսնակ կին գործարարներին» ծրագիր, որի շրջանակներում սկսնակ կին գործարարներին կցուցաբերվի ուսուցողական և ֆինանսական աջակցություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Փոքր ու միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2014 թվականի	

						ծրագրի շրջանակում	
		4.3. Կիրականացվի «Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագիր, որի շրջանակներում կին գործարարներին կցուցաբերվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Փոքր ու միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակում	
		4.4. Կիրականացվի «Գործարար ուսուցողական (տեղեկատվական) աջակցություն» ծրագիրը, որի շրջանակներում կին գործարարներին կցուցաբերվի ուսուցողական աջակցություն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Փոքր ու միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակում	
		4.5. Մարզում կիրականացվեն ծրագրեր ուղղված կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, մայրերի սոցիալական վիճակի բարելավմանը ուղղությամբ:	ՀՀ Արարատի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		4.6. Կկազմակերպվեն հանդիպումներ մարզի ձեռներեց կանանց հետ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերհանման և փորձի փոխանակման նպատակով:	ՀՀ Արագածոտնի մարզպետարան		Երկրորդ եռամսյակ	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

5.	Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում	5.1. Հանրակրթական դպրոցների, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում կներառվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող թեմաներ:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		5.2. Հանրակրթական դպրոցի 8-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում սովորողներին կուսուցանվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ գիտելիքներ:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		5.3. Հանրակրթական դպրոց ներում կկիրառվի «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնա-գիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկը: Դասղեկական ժամերի ընթացքում սովորողները կիրազեկվեն մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ՝ ուղղված սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		5.4. Հանրապետության 12 տարածաշրջանային քոլեջներում գործող կարիերայի կենտրոններում ուսանողների շրջանում կանցկացվեն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

		միջոցառումներ, դասընթացներ ու խորհրդատվություններ մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների, աղջիկների և տղաների մոտ սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարման թեմաների վերաբերյալ:					
		5.5. Պետական ծառայողների որակավորման բարձրացման, կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ գիտելիքների հաղորդման նպատակով կիրականացվեն «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում կվերապատրաստվեն բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների շուրջ 100 քաղաքացիական ծառայողներ:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
		5.6. ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության և անչափահասների գործերով տարածքային բաժինների ծառայողների համար կիրականացվեն	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	

		վերապատրաստման դասընթացներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ:					
		5.7. Մարզում կիրականցվեն համակարգչային գիտելիքների ուսուցման դասընթացներ հաշմանդամ կանանց համար	ՀՀ Արարատի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		5.8. Կանանց քաղաքական և քաղաքացիական լիդերության խթանման նպատակով կկազմակերպվեն քառօրյա սեմինար-պարապմունքներ Սպիտակի, Ալավերդու և Գուգարքի տարածաշրջանների համայնքների կին ղեկավարների և ավագանիների համար:	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցասիա /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		5.9. Կկազմակերպվեն «Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն» թեմայով սեմինար պարապմունքներ մարզի 5 տարածաշրջաններում՝ յուրաքանչյուր տարածաշրջանից 25 հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար:	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		5.10. Մարզի համայնքներում կիրականացվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ներդրման գործընթացի մշտադիտարկման արդյունքների վերլուծության և իրավիճակի շարժընթացի գնահատմանն ուղղված ուսուցողական դասընթացներ:	ՀՀ Արմավիրի մարզպետարան	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

		5.11. ՏԻՄ և համապետական ընտրություններում կանանց ներգրավվածության նպատակով կկազմակերպվեն. ա/ «Կանանց դերի բարձրացումը ժողովրդավարական գործընթացներում» թեմայով դասընթացներ: բ/ «Լիդերության դպրոց» ծրագրով դասընթացներ և 25 կնոջ կտրամադրվեն համապատասխան հավաստագրեր:	ՀՀ Շիրակի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցասիա ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		5.12. Մարզի 10 համայնքներում ավագանու անդամների համար կկազմակերպվեն դասընթացներ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ:	ՀՀ Սյունիքի մարզպետարան	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		5.13. Մարզի չաշխատող կանանց շրջանում կկազմակերպվեն դասընթացներ՝ նոր հմտությունների ձեռք բերման և նրանց սոցիալական վիճակի բարելավման նպատկով:	ՀՀ Սյունիքի մարզպետարան	«Կանանց ռեսուրսային» կենտրոն ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
6.	Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության	6.1. ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման նպատակով կիրավիրվեն նիստեր, կամփոփվեն կատարված աշխատանքները, կկազմվեն հաշվետվություններ և	ՀՀ մարզպետարան-ներ, Երևանի քաղաքապետա-րան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

	բարձրացմանը, այդ աշխատանքերի համակարգմանն ու մշտադիրակմանն ուղղված միջոցառումների իրականացում	արձանագրություններ:					
		6.2. Կիրականացվեն մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա վիճակի գնահատման և մշտադիրակման ապահովմանն ուղղված լուսաբանման աշխատանքներ:	ՀՀ մարզպետարաներ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Մարզպետարանում և Երևանի քաղաքապետարա-նում մշտական հանձնաժողովներ	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		6.3. Կիրականացավեն նախապատրաստական աշխատանքներ «Լավագույն համայնք՝ Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերի ուղղությամբ» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության համար հայտարարված մրցույթի անցկացմանը աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:	ՀՀ մարզպետարաներ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Մարզպետարանում և Երևանի քաղաքապետարա-նում մշտական հանձնաժողովներ	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		6.4. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման մեթոդական ուղեցույցի իրավական ամրագրումից հետո ՀՀ համայնքներում կիրականացվեն միջոցառումներ համայնքներին աշխատանքների իրականացման համար աջակցության տրամադրման ուղղությամբ:	ՀՀ մարզպետարաներ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Մարզպետարանում և Երևանի քաղաքապետարա-նում մշտական հանձնաժողովներ	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		6.5. Մարզխորհրդի քննարկմանը կներկայացվեն հարցեր կանանց և տղամարդկանց	ՀՀ մարզպետարան-ներ,	Մարզպետարանում և Երևանի քաղաքապետարա-	Տարվա ընթացքում	Ֆինանսա-վորում չի պահանջ-	

		իրավահավասարության քաղաքականության ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի և խնդիրների ներկայացման, համայնքների ղեկավարների կողմից կտարվեն աշխատանքներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների նկատմամբ ուշադրության բարձրացման, հսկողության ուժեղացման, տեղական ՀԿ-ների հետ համագործակցության զարգացման և ակտիվացման ուղղությամբ:	Երևանի քաղաքապետա-րան /համաձայնու-թյամբ/	նում մշտական հանձնաժողովներ		վում	
7.	Հասարակությունում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը, սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարումանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում:	7.1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքում և «Արտակարգ թերթում» կտեղադրվեն արտակարգ իրավիճակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ տեղեկատվական նյութեր:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն		Հունվար-դեկտեմբեր	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		7.2. Կիրականցվի «Լավաշի և ազգային ուտեստի՝ «Էրգրի համի հիշողություն» փառատոնը՝ որպես ազգային ինքնության կարևորագույն բաղկացուցիչ, ոչ մշակութային արժեք: Հանրության լայն շրջանում կտարվեն աշխատանքներ ազգային խոհանոցի ուտեստների տարածման	ՀՀ մշակույթի նախարարություն	«Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցիացիա» ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետա-կան բյուջե, Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	

		ուղղությամբ՝ օտար նորամուծություններից զերծ պահելու նպատակով:					
		7.3. Կմշակվեն և մարզի ՋԼՄ-ներով կլուսաբանվեն /կտեղադրվեն հոդվածներ, կկազմակերպվեն հեռուստատեսային հաղորդումներ/ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ:	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Մարզպետարանում և Երևանի քաղաքապետարանում մշտական հանձնաժողովներ, ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ	
		7.4. Մարզի մշակութային հաստատությունների աշխատակիցների համար կկազմակերպվի «Կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունները ազգային արժեհամակարգում» թեմայով զրույցբանավեճ:	ՀՀ Կոտայքի մարզպետարան	Համայնքապետարան /համաձայնությամբ/	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	
		7.5. ՏԻՄ-երի աշխատակազմերում /այդ թվում՝ համայնքների աշխատակազմներում/ կկազմակերպվեն խորհրդակցություններ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ:	ՀՀ Կոտայքի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	
		7.6. Մարզում կկազմակերպվեն կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումներ, համայնքային ընտրություններում կին թեկնածուների մասնակցություն, համայնքի ղեկավարության և ավագանու կազմում կին-անդամների թվի ավելացման նպատակով:	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Մարտ-հոկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	

		7.7. Կկազմակերպվեն «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը որպես տեղական ժողովրդավարության նախադրյալ և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոց» կլոր-սեղան Ալավերդի քաղաքում և « Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության իրականացումը համայնքների մակարդակում» թեմայով կլոր-սեղան քննարկումներ 8 քաղաքներում:	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցասիա /համաձայնությամբ/	Տարվա ընթաց-քում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		7.8. Մարզի բոլոր քաղաքներում կանցկացվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ներդրմանն ուղղված խորհրդակցություններ, որոնց կհրավիրվեն մասնակցելու նաև մոտակա գյուղական համայնքների ղեկավարներ:	ՀՀ Լոռու մարզպետարան	Համայնքապետարաններ /համաձայնությամբ/	Տարվա ընթաց-քում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		7.9. Մարզի 4 տարածաշրջաններում համայնքապետարանների աշխատակիցների, ավագանու անդամների, ՀԿ-նեի ներկայացուցիչների, լրագրողների համար կկազմակերպվեն հանդիպումներ համայնքային ծրագրերում կանանց և տղամարդկանց իրավահավասարության բաղադրիչի ներառման վերաբերյալ:	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	ՀՀ Արագածոտնմարզի քաղաքապետարաններ, ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Մարտ-ապրիլ	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	

		7.10. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը ներկայացնելու նպատակով կկազմակերպվեն հանդիպումներ համայքներում և մարզի 10 դպրոցներում՝ ուսուցիչների ներգրավմամբ:	ՀՀ Արագածոտնի մարզպետարան		Երկրորդ եռամսյակ	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		7.11. Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում համայնքների ղեկավարների աշխատակազմ/ կիրականացվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավմանը և եկամուտների բարձրացմանն ուղղված իրազեկման աշխատանքներ:	ՀՀ Արմավիրի մարզպետարան		Ապրիլ-սեպտեմ-բեր	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		7.12. Կիրականացվեն աշխատանքներ դպրոցի համակարգում հատուկ դասընթացների ներդրման համար, ուղղված մանկավարժական կադրերի և աշակերտների շրջանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ գիտելիքների ամրապնդմանը:	ՀՀ Արմավիրի մարզպետարան		Տարվա ընթաց-քում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		7.13. Կկազմակերպվեն կլոր-սեղան քննարկումներ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության թեմատիկան	ՀՀ Շիրակի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, ՀԼՄ-ներ	Տարվա ընթաց-քում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

		ազգային մշակույթում» թեմայով:		/համաձայնությամբ/			
		7.14. Համայնքներում կկազմակերպվեն կլոր սեղաններ, սեմինարներ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը» թեմայով:	ՀՀ Տավուշի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Տարվա ընթաց-քում	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		7.15. Կկազմակերպվեն «Կրթության ոլորտի կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրները» թեմայով սեմինար-պարապմունքներ մարզի 2 քաղաքների 4 դպրոցների ուսուցիչների համար:	ՀՀ Տավուշի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Սեպտեմ-բեր-հոկտեմբեր	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	
		7.16. Մարզի համայնքներում կանցկացվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ քննարկումներ, կտրամադրվեն մեթոդական նյութեր, համայնքային ծրագրերում դրանք ներառելու կապակցությամբ կտրամամդրվի խորհրդատվություն:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		7.17. Մարզի դպրոցներում կկազմակերպվեն բանավեճեր, սեմինարներ, բաց դասեր կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների վերաբերյալ:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	հոկտեմբեր -մարտ	Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ	
		7.18. Մարզի մեծ համայքներում կկազմակերպվեն կլոր սեղաններ համայնքի ղեկավարների և ավագանիների մասնակցությամբ:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով, ՀԿ-ներ /համաձայնությամբ/	մարտ-հոկտեմբեր	Ֆինանսա-վորում չի պահանջ-վում	

		7.19. Երևանի քաղաքապետարանի ենթակայության մշակութային կազմակերպությունների աշխատակիցների համար կկազմակերպվեն սեմինարներ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրներին առնչվող թեմաներով:	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		7.20. Կկազմակերպվեն քննարկումներ՝ աշակերտների համար «Սեռի հատկանիշով բռնության և կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրը աշխատաշուկայում», «Կանանց իրավունքների հարցի առաջացումը», «Հայ կանանց շարժումը պատմական անցյալում» թեմաներով:	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		7.21. Կկազմակերպվի «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն իմ պատկերացմամբ» նկարների ցուցահանդես:	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	